ԲԱԶՄԱՎԷՊ

Զ. ՏԱՐԻ. ԹԻՒ 18. 1848 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ալբերտ Անդրեան գրաւոր։

Յորժամ զաւակ՝ի գիւտ՝գայ՝սկը-սանել պարտ է յանուանակոչութենէ նորա յանուն բարի. զի թէ անյարմար[2] ա-նուն եղեալ է նորա, ժամանակ մի կե-նաց իւրոց տրտում կենայ։

Յետոյ դայեկ ընտրել պարտ է, որ յիմար և ախտաւոր չլինի, զի սովորու-թիւն վատ, և առաւել՝ ախտ, կա-թամբ դայեկին փոխադարձի՝ի տղայն[3]։

Յորժամ կատարեսցի առաջին հա-սակն, ՝ի կրթումն բարուց իւրոց և ՝ի խրատ պարտ է սկսուլ, յառաջ քան զայն որ բարք իւր՝ի յապականութիւն սկսանի. զի մանկական տին ընդունակ է, և զբարս խոտանս առաւել ընդունի, վասն պակասութեանն և կարեաց՝ որ՝ի բնութիւնն իւր կայ։ Այս որ զօրու-թիւն որ նախ երևի՝ի մանուկն, յայն ջանա որ կատարես՝։

Առաջին իրքն՝ի նշանաց զօրութեն ընտրողութեան որ՝ի տղայն յայտնի[1], ամօթն է նշան. յորժամ տիրէ ամօթն՝ նա գլխակոր կուկենայ տղայն ժամանակ մի, և այն գուշակումն է հոգւոյն իւրոյ որ զբարին ընտրէ, և զչարն անարգէ, և յորժամ այսպէս լինի, յաւելուն՝ի

1 Ի լոյս գայ։

2 Այսինքն անյարմար, անսովոր անուն չդնել տղուն, որ շատ անգամ ուրիշներին ծաղրելով կը տրամի։

3 Տես Ա տարի Օրագրիս, երես 182։

1 Պէտք է գիտել տղոց բերմունքը, և լաւերուն օգնել որ լաւագոյն ըլլան, գէշ բերմունքները չտկել։

2 Այսինքն. խելքը բացուելուն նշան, որ է ընտրողութիւն։

խրատ՝ որ այլ առաւել 'ի նոյն կենայ ։

Ծուլութեանն ամենեւին տեղի ոչ տայ ։

Առաջին իսկ 'ի կրթութիւն մանկանն այս է, որ 'ի յարակցութիւն[1] նոցա որոց գործն 'ի յապականութիւն կուհայի, զգուշանալ 'ի խաղ եւ յել եւ 'ի նիստ ։ Զի հոգի մանկանն տակաւին անգիծ է, եւ ընդունակ է կերպի առաւել քան զհամահասակն իւր . պարտ է զնա 'ի տեսակ մարգարէութեանցն[2] զգաստացուցանել, մանաւանդ 'ի քարամաթ, որ 'ի խելս եւ 'ի յընտրողութիւնս եւ 'ի հաւատարմութիւնս եւ 'ի պարկեշտութիւնս արժանաւոր են, եւ յոչ յայն որ 'ի գանձս կամ յազգս վերաբերի ։

Յետոյ զՃանապարհս եւ զշաւեղս հաւատոյն նմա ուսուցանեն, եւ զնա 'ի պահպանութիւն նմին յօժարեցընեն, եւ յորժամ 'ի հաւատոյն երբեք դարձընէ, յանդիմանեն զնա . զբարիսն առաջի իւր գովել, եւ զվատթարսն պարսաւել ։ Եւ եթէ գործ բարի ինչ 'ի նմանէ յայտնի, զայն գովել . եւ եթէ սակաւ ինչ անկարգութիւն յայտնէ, յանդիմանութեամբ եւ սպառնալեօք ուղղել ։

Եւ զանպարկեշտ ուտել եւ ըմպել, եւ զհանդերձս փափուկս եւ զարդարունս յաչս նմին արհամարհ ցուցանել . եւ բառնալ ամենեւին զհոգի նորա 'ի մարմնաւոր փափկութեանց, եւ ասել նմա թէ բազմերանգ հանդերձ եւ նկարէն գործած՝ կանանց է վայելուչ, եւ ոչ արանց, զի մեծազարմն 'ի հանդերձն ոչ հայի ։ Եւ յորժամ յայն վարժի, եւ լսելիք նորա այնու լցուի, վասն կրկնելոյ բազում անգամ բանիցն, յայնժամ նմա սովորութի դառնայ . եւ սովորութիւնն երկրորդ բնութիւն է ըստ իմաստնոցն ։

Եւ նոքա որ հակառակին այսմ խրատու, 'ի նոցանէ պատրաստ[3] պահել զտղայն ։

ՈՍԿԻՓՈՐԻԿ[4]

1 Կենակցութիւն կամ ընտանութիւն ։

2 Կ'երեւնայ թէ բերմունք ըսել կ'ուզէ, նոյնպէս այլազգական բառից ալ ։

3 Զգուշացընել, եւ կեցընել ։

4 Այս Ոսկիփորիկը գրուած է ԺԴ դարուն ետքերը ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ողբ* մանկան որբոյ ։

ՎԱ՛Յ ինձ եղո՛ւկ տառապելոյս
Ի ծընողաց լքեալ անյոյս .
Իցէ՞ բնաւին քան զիմն յերկրի
Դառն հանդիպեալ ոք աղէտի ։
Ողբք նախ բացին զհամր իմ բերան
Լեզուս 'ի դառն յեղաւ կական .
Նախ քան լուսոյ՝ զաչս արտասուաց
Ըման ծանեայ խաւարազգած .
Փոխան կոչոյ նախ ըզմայրիկ
Որբ զիս լսել վարժեցուցիք .
Չեւ ըզկաթին առեալ Ճաշակ
Միշտ դառնութեան Ճաշեցի յագ .
Փոխան ըստեանց դառն արտասուք
Ինձ եղկելոյս եղեն սընունդք ։
Ի փարելին մայրական գիրկ
Չըհանգեայ բնաւ տըղայս փափկիկ ։
Գողտրիկ անդամքս ոչ գըրգուեցան
Ճապուկ մատամբք ծընողական ,
Ծաղիկ երեսք իմ կարմրերանգ
Չառին համբոյր խանդաղատանք ։
Ոչ ինձ 'ի նինջ անդորրական
Հրաւէր կարդայր ձայն ըղձական .
Այլ իմ կականք զիս օրրէին
Եւ դառն քուն ինձ կոչէին .
Ի գիշերի երբ զարթնուի
Կաթնածարաւ Ճիչ բառնայի ,
Եւ ոչ ինձ մայր ընդոստ դիմէր
Եւ քաղցրաբուղխ կաթըն ջամբէր ։
Հասեալ յարբունս արդ մանկութեան
Ո՞ւր իմ ծընողս գոչեմ մարդկան .
Ո՞ւր իմ մայրիկ որ ետ ինձ լոյս
Մի՞ ես անծին եմ ինքնաբոյս ։
Են եւ հաւուց մարք ըղձալի
Եւ յարկ եւ բոյնք են հայրենի ,
Գտանեն իսկ գոռ վայրի գազանք
Ըզմայրենի սիրոյն Ճաշակ .
Ե՞ր եղկելոյս հաւուցդ հանգոյն
Չեն խանդակաթ ծընողք սիրուն .
Ըզձեզ թռչունք զըւարթադեմ
Ընդ թեւոք մայրդ երբ տեսանեմ ,